ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

MINISTRY OF TERRITORIAL ADMINISTRATION
AND INFRASTRUCTURES OF RA

«ԵՐԵՎԱՆԻ ՋԷԿ» ՓԲԸ

"YEREVAN TPC" CJSC

ՀՀ, ք. Երևան 0053, Արին-Բերդի փ. 3-րդ նրբ., 3

RA, 0053 Yerevan, Arin-Berdi st. 3rd Lane, 3

www.ytpc.am +374 11 472 760 | +374 11 472 771 mailbox@ytpc.am

N° ԿԲ/266-2024

12 06 2024թ./y.

ՈՐՈՇՈՒՄ

«ՄԱՔՍՎԻՆ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության բաժնետիրական ընկերությունների մասին օրենքի 88-րդ հոդվածի պահանջներով՝

Պ Ա Ր Զ Վ Ե Ց

Գործի նախապատմությունը.

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն(այսուհետ՝ Պատվիրատու) 2024 թ-ի մայիսի 10-ին հայտարարել գնանշման ընթացակարգով ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ 24/21 գնման գործընթաց՝ վեց չափաբաժիններով իր կարիքների համար առանցքակալների ձեռքբերման: 2024 թ-ի հունիսի 17-ին բացվել են հայտերը, որից պարզվել է, որ գնման գործընթացին հայտ է ներկայացրել մեկ մասնակից «Մաքսվին Գրուպ» ՍՊԸ-ն(այսուհետ՝ Մասնակից): Գնահատող հանձնաժողով մասնակցի հայտը գնահատել է բավարար և ընտրված մասնակից է ճանաչել «Մաքսվին Գրուպ» ՍՊԸ-ին:

Հայտի գնահատման ժամանակ ՀՀ Ֆինանսների նախարարության gnumner.am կայքքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված, գնումների գործընթացի մասնակցելու իրավունք չունեցող կազմակերպությունների ցուցակում «Մաքսվին Գրուպ» ՍՊԸ-ն ներառված չէ:

Գնահատող հանձնաժողովը մայիսի 29-ի որոշմամբ գնման գործընթացի հաղթող է ճանաչվել «Մաքսվին Գրուպ» ՍՊԸ-ն:

Սույն թվականի մայիսի 30-ին տեղեկագրում հրապարակվել է պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը:

2024 թ-ին Պատվիրատուի կարիքների համար հայտարարված մեկ այլ գնման գործընթացի՝ ֆիլտրերի ձեռք բերման մրցույթին, մասնակցած «Մաքսվին Գրուպ» ՍՊԸ-ի անվանումը գնումների գործընթացի մասնակցելու իրավունք չունեցող կազմակերպությունների ցուցակում ստուգելու ժամանակ, ի հայտ է եկել հետևյալը, որ վերոգրյալ ցուցակում ընդգրկված է «Մաքսվին» ՍՊԸ-ն: Հետագայում պարզվել է որ, «Մաքսվին» ՍՊԸ-ն գրանցված է նույն հասցեում, ինչ որ «Մաքսվին Գրուպ» ՍՊԸ-ն, միևնույն ժամանակ «Մաքսվին» ՍՊԸ-ի գործադիր տնօրենը Արամ Արարատի Հովհաննիսյանը, հանդիսանում է «Մաքսվին Գրուպ» ՍՊԸ-ի 100% բաժնեմասերի սեփականատեր և փոխկապակցված անձ է «Մաքսվին» ՍՊԸ-ի 100% բաժնեմասերի սեփականատեր Արտավազդ Արարատի Հովհաննիսյանի հետ, երկու ընկերություններն էլ գրանցված են միևնույն հասցեում՝ ք. Երևան, Դավիթաշեն 2-րդ թաղ, շ 4/3 :

Գնահատող հանձնաժողովի քարտուղարի 04.06.2024թ-ի գրած զեկուցագրի հիման վրա սույն թվականի հունիսի 6-ին տեղի է ունեցել գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստ, որում որոշում է կայացվել ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ 24/21 գնման գործընթացը հայտարարել չկայացած :

Հիմք ընդունելով , որ «Մաքսվին Գրուպ» ՍՊԸ-ն հայտով ներկայացրել հավելված 1-ը , որով վերջինս տվել է իրականությանը չհամապատասխանող տվյալներ, գնտնում եմ , որ անհրաժեշտ է դիմել լիազոր մարմին, «Մաքսվին Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացի մասնակցելու իրավունք չունեցող կազմակերպությունների ցուցակում ներառելու նպատակով:

<u>Գործի քննության իրավական հիմքերը.</u>

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետը՝ Խախտել է .... Գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունները..... Կամ գնման գործընթացի տվյալ մասնակցի հետագա

նասնակցության դադրեցմանը, ՀՀ կառավարության 2017 թ-ի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ի ենթակետով սահմանված Կարգի Որոշման 121–րդ կետը՝ Մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակմանը, Կարգի 119-րդ կետի 2-ենթակետի գ) կետը՝ ֆիզիկական և իրավաբանական անձիք համարվում են փոխկապակցված, եթե նրանք հանդիսանում են խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալի, խորհրդի անդամի, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականցնող կոլեգիալ մարմնի նախագահ:

Որոշում եմ

1. «Մաքսվին Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 2 (երկու) տարի ժամկետով:

2. Որոշումը տրամադրվում է «Մաքսվին Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը և լիազորված մարմնին (ՀՀ ֆինանսների նախարարությանը)՝ Վաճառողին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Մաքսվին Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն իրազեկելուն հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՋԷԿ» ՓԲԸ-ի
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ Պ/Կ՝ **Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

Կատարող

Ռ. Եղոյան 011 43 03 42